

բոլոր ինտելիգենտ մեր յեղափոխականներուն պակասածը անիկա կը յաւակնէր գտած ըլլալ: Անգամ մը, որ այդ բարձր շնորհներով ու հսկայ կամքով օժտուած ընկերները ճանչնային երկիրը, հոն ապրող հայը տեսնէին իր իրական կարիքներուն, կարողական (potentiel) արժանիքներուն մէջ, յեղափոխութիւնը կը դադրէր առանձին ինքն իր մէջ ծուարող մարմին մը նկատուելէ ու կ'ըլլար ժողովուրդին թաքուն ուժերուն ցայտուն խորհրդանիշը: Ինչ ընել, սակայն, մինչեւ որ իրագործուէին այդ պայմանները: Բայց շատ պարզ բան մը, - ճանչնալ այդ ժողովուրդը շատ մօտէն, ամէնօրեայ շփումով մը ու գիտակցիլ անոր ցաւերուն, որպէսզի ըստ այնմ հայթայթուէին դարմանները: Ճեղքել թուրք կայսրութիւնը արեւելքէն դէպի հարաւ (Կիլիկիա), հարաւէն դէպի արեւմուտքը, մինչեւ Պոլիս: Որքան ուրախ էր այն գիշերը, երբ այդ հսկայական ձեռնարկը գէթ իբրեւ ծրագիր ընտանի դարձաւ իր մտածողութեան: Պիտի առնէր ճամբորդի ցուպը ու անցնէր գործի: Բայց այս մասին աւելի ուշ:

Իր կեանքի այն շրջանին, ուր անիկա պատանի էր, այդ «Կովկասում» միշտ կար թուրքը, հագիւ-հագ իբրեւ հեռու հեքիաթ, յիշեցնելով դարերու տիրակալող սարսափները, արեւելքէն դէպի արեւմուտք իր խուժումին: Պատմութիւնը թուղթ է, երբ չի պաշտպանուիր: Թուրքերը, մեզի պէս, թուղթի վրայ կը խաղան, երբ իրենց գիրքերը կը մատուցանեն իրենց զաւակներուն: Այս դարուն սկիզբին, Կովկասի մէջ թափթփուք ժողովուրդ մըն էր այդ անունին տակ խմբուած ամբոխը, առհասարակ բորբոսած մզկիթներու պատերուն կծկտած, վախկոտ, թոյլ անբանութեամբ մը, ու գիտցէք, որ դիւրին չէ ինքզինքը հերքելը, մա'նաւանդ սրբել, մաքրագործելը՝ ինչ որ մանկութեան տախտակներուն վրայ գրած են մեր զգայարանքները: Մե՛ղք, որ քիչ են իմ էջերս եւ ըլլամ ստիպուած շատ, շա՛տ բան գոհելու Մաթիկին զգայնութիւններէն - իր գեղէն Թիֆլիս մտնելու, տառապելու, ուսում առնելու, զարնելով գլուխը հագար քարի: Իր